

ՀԱՍԻՀ ՀՈԳԺՈՂԿՈՄԸՏ

№ 81

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ


№ 81

ԻՍ. ՏԵՐ-ՆԵՐՍԻԱՅԱՆ

ԳՈՒԹԱՆ, ԹԵ՛ ԱՐՈՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1930



ՀԱՍԻՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԸՏ

№ 81

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 81

631.312

ԻՍ. ՏԵՐ-ՆԵՐՍԻՍՅԱՆ

A 4353

ԳՈՒԹԱ՞Ն, ԹԵ՛ ԱՐՈՐ

17330



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1930

Հրատ. № 1223

Գրառեպ. № 4014 (բ) Պատվ. № 255 Տիր. 5000

Պետերատի Յերկրորդ Տպարան Յերևանում

ԳՈՒԹԱՆ, ԹԵ՛ ԱՐՈՐ

I.

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ՎԱՐԵԼ ՀՈՂԸ

Ամենքը զիտեն, վոր չվարված ու կոշտ հողի մեջ մեր կուլտուրական բույսերը (ցորեն, գարի, բամբակ և այլն) կամ բոլորովին չեն ծրլում-ածոււմ կամ լեթե ածոււմ են, շատ վատ վիճակ են ունենում և վատ բերք տալիս:

Իրա պատճառն այն է, վոր ցանած բույսը կոշտ հողի մեջ չի կարողանում արմատներ գրցել, ամրանալ, բավարար չափով ջուր և սննդարար նյութեր վերցնել հողից և մնում է թույլ, լղարիկ, իսկ շատ անգամ բոլորովին չի ծլում ու փչանում-կորչում է:

Հենց այդ տեսնելով է, վոր մարդիկ դեռ շատ հին ժամանակներից սկսած, սովորել են հողը վարել, մշակել և հետո սիայն ցանել:

Ուրեմն, հողը վարելու կամ մշակելու նպատակն այն է—նրան այնպիսի դրության մեջ դնել, վոր ցանվող կուլտուրական բույսը ծլելու և կանոնավոր աճելու համար ամենալավ պայմաններն ունենա:

Նեխված ողուժ, կեղտոտ ու ցեխոտ հատակի վրա ընկած, մենակ դարմանով կերակրվող անասունները լղար ու նվազ են լինում, ուժից ընկուժ են ու անպետք դառնում աշխատանքի համար:

Յեթե բույսի բնակարանը, վոր հողն է, կերը, վոր հողի մեջ լեղած նյութերն են, ջուրը, վոր հողի մեջ է հավաքված լինում, — սլակաս են, վատ են, այն ժամանակ բույսն ել կարգին զարգանալ չի կարող, ուժասպառ կլինի և չի տալ այն բերքը, վոր մենք կուզելինք ստանալ:

Բույսի համար նպաստավոր լավ պայմաններ ստեղծելը կախված է մեզանից: Ինչքան լավ վարենք ու մշակենք հողը, այնքան ավելի լավ պայմանների մեջ դրած կլինենք մեր ցանած բույսերը:

Տեսնենք, թե ինչ հետևանքների յենք հասնում մենք հողը վարելով և կանոնավոր մշակելով:

1. Հողը վարելով մենք ամենից առաջ հրնարավորութուն ենք ստեղծում, վոր հողի մեջ ող խաղա: Ողի խաղալը հարկավոր է բույսի արմատների շնչելու համար և, բացի դրանից, նպաստում է, վոր հողի մեջ գտնվող անդարար նյութերը, վորոնցով կերակրվում են բույսերը, հեշտ մարսելի պամ ընդունելի դառնան բույսերի համար:

2. Հողը վարելով և փուխը պահելով՝ մենք վոչնչացնում ենք հողի մեջ մեծ քանակութեամբ աճող ու հեշտ մեծացող մուխոտները (անպետք խոտերը, չայիրները): Ստիպում ենք, վոր այդ խոտերը կամ բույսերից մնացած արմատներն ու ուրիշ մասերը հողի մեջ ընկնելով փտեն, քայքայվեն և բույսերի համար սննդաբար նյութեր դառնան: Բացի այդ, վոչնչացնելով մուխոտերը՝ մենք թույլ չենք տալիս, վոր հողի միջի խոնավութիւնը կորչի, վորովհետև մուխոտներն աճելով ու շատանալով՝ հողից մեծ չափերով խլում են թէ՛ խոնավութիւն և թէ՛ սննդաբար նյութեր:

3. Վարելով և փխրացնելով հողը՝ մենք հեշտացնում ենք մեր ցանկացած բույսի սերմերը, հողով ծածկելը, նրա ծլելը, արմատներ գցելը և արմատների զարգանալու համար շատ հարմարութիւններ ստեղծում:

4. Վարած և փխրուն հողի մեջ մենք կարողանում ենք հեշտութեամբ գոմայր և ուրիշ պարարտանյութեր մտցնել ու այնպես դասավորել այդ պարարտանյութերը, վոր բույսերի արմատները կարողանան լրիվ ոգտվել այն սննդից, վոր մտցնում են հողի մեջ պարարտանյութերի միջոցով:

5. Վարած հողն իր մեջ հավաքում է այն

բոլոր ջրերը, վոր առաջ են գալիս անձրևներին ու ձյուներից և յերկար ժամանակ պահպանում ե իր մեջ հալաքված խոնավությունը: Բացի այդ, վարած հողը գարնան տաքերն սկսվելիս հեշտությամբ և խորը տաքանում ե արեգակի ճառագայթների ազդեցությունից:

6. Վերջապես, մշակելով հողը՝ մենք աշխատում ենք նրան մանր հատիկային կազմություն տալ, վերացնել կոշտերը, վորոնք խանգարում են թե ցանելուն, թե բույսերի արմատակալելուն և թե բոլոր անհրաժեշտ պայմաններն ստեղծելուն:

Ահա թե ինչ նպատակներ ունի հողը մշակելը, և թե ինչու մենք պետք ե առանձին խրնամքով և ուշադրությամբ կատարենք հողերի վարելու աշխատանքը:

II.

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԱՐԵԼ ՇՈՂԸ

Մենք տեսանք, վոր յերբ դրսի ողը հեշտությամբ ներս ե մտնում հողի մեջ, այդ հանգամանքն ոգտակար ե բույսերի արմատների շնչառության և հողի միջի սննդաբար նյութերի մարսելի դառնալու համար:

Յե՛րբ կարող ե հողի մեջ ողի ներս խաղալը ապահովված լինել:

Յեթե վարը կատարենք յերես, կիսատ-
պուստ, վարած դաշտում շատ խամեր ու կոշ-
տեր մնան, այդ դեպքում դրսի ողը հեշտու-
թյամբ հողի ներսը մտնել կամ խաղալ չի կա-
րող: Ընդհակառակը, կոշտ և խամ մնացած մա-
սերում ողն ամենևին ներս չի խաղալ, իսկ յե-
թե վարը յերես ենք կատարել, հողի ավելի խոր
ընկած շերտերում հաղիվ թե ող խաղա:

Պարզ է, ուրեմն, վոր ողի խաղալու և սննդ-
դարար նյութերով հողը հարստանալու համար
մենք պետք է վարը կատարենք ինչքան կարելի
յե խոր և փխրուն պահենք, վորպեսզի հողի
մասնիկների արանքով դրսի ողը կարողանա
հեշտությամբ ներս մտնել:

Յերես վարելու դեպքում հողի միջի մուս-
խոտերը, հնձից հետո դաշտում մնացած խոզա-
նը, արմատները և այլն լավ չեն թաղվի հողի
մեջ, ուրեմն և չեն քայքայվիլ ու փտիլ:

Վորպեսզի այդ բոլորական մնացորդները
լավ փտեն և հողի մեջ սննդանյութ դառնան,
հարկավոր է, վոր բացի խոր վարելուց վարած
հողաշերտը լավ շուռ գա ու իջ տակը թողնի
այդ բույսերի մնացորդներն ու արմատները:
Հակառակ դեպքում նրանք կշորանան, բայց չեն
փտիլ և սնոգուտ կկորչեն:

Վարելու ամենապլխավոր պայմանը պետք

ե լինի հողը լավ շուռ տալը, այնպէս, վոր հողի յերեսի մասն անպայման տակն ընկնի: Յեթե վարած հողի շերտը շուռ տված չե, այդ դեպքում հողը չի կարող լավ քամհարվել, ողն ազատ ներս չի մտնի, և մուխսոտերն ու շալիքները փոխանակ փտելու, հեշտությամբ և ավելի ուժեղ կարող են աճել ու դարգանալ:

Հողի փխրուն լինելուց կախված ե և լավ ցանք կատարելը: Իսկ յերբ կարող ե հողը փրկուն լինել: Իհարկե այն ժամանակ, յերբ նախորն ե վարվել և լավ ե շուռ յեկել:

Բոլորն ել տեսած կլինեն, վոր չվարված կամ յերես վարած հողերում անձրևաջրերը և ձյունից գոյացած ջրերը չեն մնում, այլ առուներ գոյացնելով՝ դաշտից դուրս են հոսում: Այդպիսի հողերն անձրևներից մի յերկու որ հետո բոլորովին չորացած են լինում:

Ի՞նչն ե դրա պատճառը: Պատճառն այն ե, վոր հողը չի կարողանում ներս ծծել այդ ջրերը: Նրա վարված բարակ շերտը շուտով կշտանում ե ջրից և չկարողանալով պահպանել իր մեջ ջուրը, դուրս ե հոսում, շատ անգամ քանդելով վարած բարակ շերտը և հողն ել ջրերի հետ տանելով:

Այդպէս չի լինում, յերբ հողը խորն ե

վարված լինում, խամ տեղեր չի ունենում և լավ շուռ սված է լինում:

Սոր վարած և լավ շուռ լեկած հողում անձրևներից ու ձյուններից առաջ լեկած ջրերը խորն են ծծվում, լավ պահպանվում են. այդպիսի հողերում առուները առաջ չեն գալիս, և, բացի այդ, հավաքված խոնավությունն ել լերկար է պահպանվում:

Այս ձևով ուրիշ լերկրներում անջրդի հողերի վրա կարողանում են լերաշտի դեմ կռվել և շատ անգամ ավելի շատ բերք ստանալ, քան մենք լերաշտ չեղած դեպքում:

Լավ վարված հողը, ինչպես տեսանք, կոշտեր և խոշոր հողագնդեր չպետք է ունենա: Նա պետք է այնպես լինի, վոր նրա մասնիկները հատիկի չափ լինեն կամ, ինչպես ասում, են հատիկավոր կազմութուն ունենան:

Յեթե վարած հողն այս բոլոր հատկություններն ունի, այն ժամանակ ցանած սերմն ընկնելով հողի մեջ՝ կդառնվի միանգամայն լավ և նպաստավոր պայմաններում, և նրա առողջ ու կանոնավոր աճեցողութունը, ուրեմն և ըսպասվելիք լավ բերքն ապահովված կլինի:

III.

ԱՐՈՐԻ ՎԱՐԸ

Արորը Հայաստանում մինչև այժմ գյուղատնտեսութեան մեջ շարունակում է մեծ տեղ բռնել: Բավական է ասել, վոր Հայաստանի մասշտաբով մենք ունենք 54.990 հասարոր և դրա դիմաց 14.600 հատ գութան:

Մենք այստեղ չենք խոսում տրակտորների մասին, նախ՝ վորովհետև մեր նյութը հատկապես գութանն ու արորն են, և ապա այն պատճառով, վոր տրակտորը կարող է աշխատել գլխավորապես տափարակ-հարթավայրերում, իսկ Հայաստանի վարելահողերի մեծագույն մասը լեռնոտ և անհարթ շրջաններն են կազմում:

Ինչպիսի վար է կատարում արորը: Այս խնդիրն է, վոր մենք ուզում ենք այս գլխում պարզաբանել և հետո նրան համեմատութեան դնել գութանի հետ:

Ամենից առաջ ասենք, վոր արորը չի վարում այնպես, ինչպես հարկավոր է, այլ շարք առ շարք ափսոսում է ու փորում հողը և նրա մի մասը միայն ցրում չերկու կողմի վրա: Ուրիշ կերպ էլ նա չի կարող վարել, վորովհետև նրա սրածայր և նեղ խոփը, վոր կտրելու ու հողը շուռ տալու հարմարություններ չունի, ան-

կարող ե մեր առաջին գլուխներում պահանջած վարն անել:

Շարք առ շարք, իրար կողքից ակոսներ փորելով, արորը չի կարողանում հողաշերտ վերցնել և շուռ տալ, այլ առուներ ե կազմում իրար կողքից: Այդ առուների արանքներում մընում են դաշտի ամբողջ յերկարությամբ բոլորովին խամ մնացած շերտեր, և լեթե հաշվի առնենք, կտեսնենք, վոր արորով վարը կատարելուց հետո դաշտի կեսից ավելին մնում ե խամ, խոփ չդիպած:

Բայց այստեղ արորի կողմնակիցները կարող են ասել, թե իրենք ել գիտեն, վոր այդպես ե, դրա համար ել մի ուղղությամբ արորով վարելուց և վերջացնելուց հետո կարող են յերկրորդ անգամ վարել հակառակ ուղղությամբ:

Դա, իհարկե, ճիշտ ե: Յերկրորդ անգամ հակառակ ուղղությամբ վարելուց այդ թերությունը պակասում ե, բայց չի վերանում, և լեթե մեկ անգամ վարելուց առուներ ու խամեր են գոյանում դաշտի յերկարությամբ, ասլա յերկու ուղղությամբ վարելուց նույն առուները կազմվում են հակառակ ուղղությամբ, իսկ խամեր մնում են յերկու իրար հանդիպող ակոսների արանքներում: Այս դեպքում ամենապակասը դաշտի մեկ քառորդ մասը նորից խամ ե մնում, և վոչ մի

ձևով այդ մնացած խամերը վոչնչացնել չենք կարող:

Ահա այս խամ մնացած մասերից ել առաջ ե գալիս արորավարի ամբողջ դժբախտությունը:

Բոլորին հայտնի յե վոր խամ մնացած հողերի վրա միշտ ել մուլախոտեր և չալիրներ են լինում բուսած՝ հենց վաղ գարնան սկզբից: Այդ չալիրներն ու մուլախոտերն արորավարից հետո մնալով խամերում անմլաս, սկսում են արագ աճել և դեռ մեր ցանած սերմերը չծլած, մեծանում են ու խեղդամահ անում նոր ծլած հացաբույսերի կամ այլ կուլտուրական բույսերի ցանքսերի մեծ մասը:

Այդ մուլախոտերն ու չալիրներն իրենց ուժեղ արմատները հեշտությամբ տարածում են կողքի վարված մասում, նոր ծիլեր են տալիս ու բազմանում և այդպիսով խլում են հողից մեր ցանքերին անհրաժեշտ սննդանյութերն ու խոնավությունը: Իսկ յիթե նոր ծլած ցորենի ու գարու հատիկը դեռ չամրացած առատ սնունդ ու խոնավությունն չունենա, պարզ ե, վոր նա նվազ կմնա և շրջապատված լինելով հողի ներսււս մուլախոտերի արմատներով, իսկ հողից դուրս՝ նրանց արագ մեծացած ցողուններով ու տերևներով, կզրկվի, բացի սննդից ու խոնավությունից, նաև արեգակի ճառագայթներից ու լուսից:

Իսկ ճառագայթներից ու լուսից զուրկ մատղաշ բույսը կդեղնի, նվազ կմնա, մեծ մասամբ կվոչնչանա՝ չդիմանալով մուլախոտերի մրցման, իսկ մեր ցանած սերմերից կանգուն մնացածներն ել այնքան նվազ կլինեն, վոր շատ պակաս բերք կտան:

Շատ պարարտ և ուժեղ հող պիտի լինի, վոր այդ պայմաններում մենք կարողանանք հողից 40—50 փութ հատիկ ստանալ, իսկ սովորական հողերում բերքը 25 փթից յերբեք ավելի չի լինիլ:

Մեր գյուղացիներից մեկը շատ պատկերավոր ձևով եր բացատրում մուլախոտերի ու հացահատիկների մրցումը:

Նա ասում եր, վոր մուլախոտերը մեր խամ ու չմշակված հողերի հարազատ զավակներն են: Նրանք այդ խամերում իրենց շատ լավ են զգում, իսկ մեր ցանած հացաբույսերը՝ ցորենն ու գարին յեկվորներ են և եդ կոշտ ու կոպիտ պայմաններին անսովոր:

Յերբ մօնք վարելուց խամեր ենք թողնում և մուլախոտերն ամբողջութեամբ չենք վոչնչացնում, զրանով մենք հողի «հարազատ» զավակներին հնարավորութուն ենք տալիս ավելի ուժեղանալ և կռվել «յեկվորների» դեմ, այսինքն մեր ցանած կուլտուրական բույսերի դեմ:

Այս պատճառաբանութիւնը այնքան ճիշտ է, վոր վոչվոք դրա դեմ առարկել չի կարող: Բայց արորավարի թերութիւնը մենակ այդ չէ:

Մենք տեսանք, վոր արորը միմիայն առուները փորելով, հողը շուռ չի տալիս: Իսկ չիրը հողը շուռ չի գալիս, հողի մեջ չեղած արմատները, ծղոտը, ուրիշ բույսերի մնացորդները մընալով հողի յերեսին՝ չեն փտում, չեն քայքայվում: Սա չել պակաս թերութիւնն է, և արորի այս թերութիւնը վերացնելու համար մենք վոչ մի հնարավորութիւն չունենք:

Կարճ էնք արդյոք արորով խոր վարել վոչ:

Ամենախոր վարը, վոր կարելի չէ անել արորով, դա $2-2\frac{1}{2}$ վերջոկն է, այն էլ փափուկփխրուն հուլերում: Յեթե հողը կավային, ծանր է ու կոշտ, կամ յերկար ժամանակ խամ մնացած, այդ դեպքում արորը հազիվ է կարողանում $1-1\frac{1}{2}$ վերջոկ խորութեամբ ակոսներ կազմել, այն էլ իր ընթացքի ժամանակ այնքան սայթաքումներ է ունենում ու այնպիսի խոշոր խամեր է թողնում, վոր շատ անգամ մարդ կասկածում է, թե այս դաշտը վարված է, թե չէ:

Վորպեսզի արորով կարելի լինի խոր վարել, հարկավոր է, վոր մաճկալն իր ունեցած-չունե-

ցած ամբողջ ուժը գործադրի, ամբողջ վարի ընթացքում մաճի վրա սեղմելով և, ինչպես ասում են, հալից ընկնելով, ուժասպառ լինելով:

Այս դժվարին ու ծանր պայմաններում ել մաճկալին հազիվ հաջողվի $2-2\frac{1}{2}$ վերջոկ խորությամբ վար կատարել:

Այսպես վարված հողում կարող ե խոնավություն հավաքվել ու պահպանվել: Իհարկե վոչ:

Յեկած անձրևների ու հալված ձյունաջրերը արորի կազմած առուններով ավելի հեշտությամբ դուրս կհոսեն դաշտից, քան լեթե դաշտը վարած չլիներ:

Արորով վարած հողի մեջ բավարար չափերով հողի խորքերն ող չի խաղալ, հողը հեշտությամբ յեղած խոնավությունից ել կզրկվի, և լեթե յերաշտ յեղավ, ցանքսը մի շաբաթ ել չի դիմանալ:

Պարզ ե այս բոլորից, վոր արորի մշակած հողերից մենք յերբեք լավ բերք սպասել չենք կարող, ուրեմն վար պետք ե անենք ուրիշ գործիքներով:

IV.

ԳՈՒԹԱՆԻ ՎԱՐԸ

Բոլորն ել տեսել են գուլթանն և գիտեն, թե ինչպես են շինված նրա մասերը:

Գուլթանի ամենից կարևոր մասերն են՝ խոփը, թևը և դանակը:

Դանակը խոփի առջևից ամրացրած լինելով՝ կտրում է հողը վերևից ներքև, դրանով հեշտացնելով խոփի աշխատանքը:

Խոփը խորանալով հողի ներսը՝ կտրում է հողը տակից վորոշ լայնությամբ, և յերբ գուլթանն առաջ է գնում, այդ կտրած շերտը կամաց-կամաց բարձրանում է խոփի վերին կողմը, ուր սկսվում է գուլթանի թևը: Կտրած հողի շերտն իր ամբողջ լայնությամբ բարձրանում է գուլթանի թևի վրա, շուռ գալիս ու ընկնում բացված ակոսի մեջ յերեսի վրա:

Գուլթանները լինում են մեծ կամ փոքր, լայն կամ նեղ թևերով, կիսապլանածև կամ պլատուտակածև թևերով: Սրանցից ամեն մեկն իր տեղն ու նշանակութունն ունի:

Յիթե հողը թեթև ավազահող է, այդ գեպքում գործ են ածում թեթև, կիսապլանածև թևավերով գուլթաններ, վորոնք հեշտությամբ վարում և հողի շերտը շուռ են տալիս:

Յեթե հողը կհասկոշտ կավաավազային հող
 ե, այն ժամանակ գործ են անում ավելի ծանր
 գուլթաններ, վորոնց թեն ավելի լայն ե լինում
 և ավելի կոր: Ավելի կոր թևի շնորհիվ խոփով
 կտրած հողաշերտն ավելի լավ ե շուռ գալիս, և
 շերտի տակ են մնում հողի յերեսի մոլախոտերն
 ու խոզանը:


Յեթե հողը ծանր ե, կավային կամ յերկար
 ժամանակ խամ մնացած ու ճիմով ծածկված, այդ
 դեպքում գործ են անում ծանր պտուտակաձև
 թևով գուլթաններ: Գուլթանի թևը պտուտակաձև
 են շինում այն պատճառով, վորովհետև ծանր
 կավահողերի կամ խամերի կտրած շերտերը
 բարձրանալով թևի վրա չեն փշրվում և սովորական
 գլանաձև թևի վրայից նորից ընկնում
 են իրենց առաջվա տեղը:

Պտուտակաձև թևը և՛ փշրում ե կտրած շերտը,
 և՛ բոլորովին պտտելով շուռ տալիս նրան
 յերեսի վրա և դրում ե բացված ակոսի մեջ:

Ինչպես տեսնում եք, բոլոր գուլթանները
 շինված են այն հաշվով, վոր հողաշերտը տակից
 կտրելուց բացի, անպայման շուռ գա յերեսի
 վրա: Թե ինչու լե հարկավոր, վոր հողաշերտն
 անպատճառ շուռ գա, դրա մասին մենք արդեն
 գիտենք նախորդ գլուխներից:

Պարզ ե ուրեմն, վոր գուլթանն արորի նը-

A 4953



ման չի փորփրում և առուներ չի շինում, այլ հողի շերտը 4—6 վերջոկ լայնությամբ խորքից կտրելով բարձրացնում և ամբողջությամբ շուռ և տալիս:

Այդպես ակոս ակոսի յետևից կազմելով և շերտերը շուռ տալով, գութանն ակոսների արանքներում վոչ մի թիղ խամ չի թողնում, յետե, իհարկե, մաճկալն ինքն անփուլթ չի կատարում աշխատանքը:

Պարզ և, վոր լեթե գութանը վարելով խամ տեղեր չի թողնում, ուրեմն նա ամբողջապես վոչնչացնում և մոլախոտերի բները, հողի այդ «հարագատ» զավակներին զրկում և վոչ միայն ուժեղանալու, այլև գոյություն ունենալու հնարավորությունից:

Հողը լավ շուռ տալով, գութանն այդ մոլախոտերն ու չայիրները թաղում և հողի տակ, ուր խոնավության ու դրսից ներս մտնող ողի շնորհիվ այդ խոտերն ու բուսական մնացորդները կարճ ժամանակամիջոցում փտում են, քայքայվում, հող են դառնում և, այդպիսով, հողի մեջ սննդարար նյութ գառնում մեր ցանած կուլտուրական բույսերի համար:

Այս բոլորը, ինչպես տեսանք, արորավարի ժամանակ չի կատարվում:

Այսքանը դեռ բավական չէ:

Գուժանն այնպես է հարմարեցրած, վոր նրանով կարելի չե ցանկացած խորությամբ հողը վարել: Յերբ ցանկանում ենք խոր վարել, գուժանի առջևի դեկը բարձրացնում ենք, և ընդհակառակը, չեթե ուզում ենք չերես վարել, դեկը ցածրացնում ենք:

Այսպիսով միևնույն գուժանով մենք կարողանում ենք վարել սկսած 2 վերջոկից մինչև 4--5 վերջոկ խորությամբ:

Կան հատուկ ծանր գուժաններ, վորոնցով հնարավոր է մինչև 8--10, նույնիսկ 12 վերջոկ խորությամբ վար անել: Բայց այդպիսի գուժաններ, մեզ շատ քիչ են պետք գալիս: Նրանք գործ են ասփում, չեթե ուզում ենք այգի տընկել, խոր առուներ բանալ և այլն:

Իհարկե այս բոլորի կեսի կեսը մենք չենք կարող անել արորով:

Ճիշտ է, արորը մի առավելություն ունի: Նրանով կարելի չե ավելի շատ տարածություն մշակել, քան թե գուժանով, և արորի վարն ավելի հեծան է նստում, քան գուժանավարը:

Բայց այդ եծան վարը մեզ վրա ավելի թանգ է նստում, վորովհետև գուժանավարը կրկնակի և չեռակի չափերով ավելի չե բերք տալիս, քան արորավարը:

Գուժանավարը մաճկալի համար ավելի թեթև աշխատանք է, քան թե արորավարը:

Գութանը կայուն հենարան ունենալով չի որոշվում վարի ժամանակ այնպես, ինչպես արորն է: Բացի այդ, գութանը արորից ծանր լինելով, ավելի սուր և կտրելու հարմար խոփ ունենալով, խորն է մտնում հողի մեջ և մաճկալը ստիպված է լինում ահագին ուժ ու աշխատանք դնելու, վոր գութանը շերտից դուրս չըգա, չսայթաքի ու չծռվի:

Այս պատճառներով գութանավարը դեկավարելն ավելի դյուրին և հեշտ աշխատանք է, քան արորի աշխատանքը, վոր, ինչպես տեսանք, ահագին չարչարանք է պատճառում մաճկալին:

Վերջապես, պետք է ասենք, վոր գութանը կարող է աշխատել ամեն տեսակի հողերի վրա, և այն կարծիքը, վոր շատերն ունեն, թե գութանը լեռնոտ տեղերում, լանջերի վրա լավ չի աշխատում, սխալ է և հետևանք է գութանի լեզուն չիմանալու:

Ընդհակառակը, հիմա կան գութաններ (թեթև գութաններ), վորոնք շինված են հատկապես լեռնոտ ու լանջերի հողեր վարելու համար:

Այս բոլոր առավելութունները գալիս են ասելու, վոր գութանը այն գործիքն է, վոր փոխարինելով արորին, պետք է լավացնի մեր հողերի մշակութայն ձևերը և դրանով հենց բարձ-

բացնի ու կրկնապատկի մեր հողերի բերքա-
տվութիւնը:

V.

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մենք տեսանք գութանի առավելութիւն-
ներն աշորի համեմատութեամբ: Հիմա տեսնենք,
թե ինչի յենք ձգտում մենք գութանավարով:

1. Հնարավորութիւնն ունենալով գութանով
ցանկացած խորութեամբ վարել հողը, մենք
ստեղծում ենք վրսի ողի ներս խողալու պայման-
ներ: Կավացնում ենք հողի հատկութիւնը, արա-
գացնում ենք հողի միջի սննդանյութերի շար-
ժումը և բույսերի համար հեշտ ընդունելի յենք
դարձնում այդ սննդանյութերը:

2. Չենք թողնում, վոր յեկած անձրևները
և ձյունից գոյացած ջրերը զուր տեղը կորչեն:
Ստեղծում ենք այնպիսի պայմաններ, վոր այդ
ջրերը ծծվեն հողի մեջ և պահպանվելով կամ
ամբարվելով ապահովեն մեր ցանքերին անհրա-
ժեշտ խոնավութիւնը:

3. Հնարավորութիւնն ենք ստեղծում, այդ-
պիսով, յերաշտի դեմ կռվելու և մեր դաշտերի
բերքն ապահովելու:

4. Վոչնչացնում ենք մոլախոտերն ու շա-
լիքները և այդպիսով մեր ցանքերի համար


անհրաժեշտ խոնավությունն ու սնունդը պահպանում:

5. Փխրացնում ենք հողն աշնպես, վոր ցանած սերմերն ընկնեն նպաստավոր միջավայր և կանոնավոր ու միաժամանակ ծլին, աճեն, — զարգանան ու բերք տան: Ուրիշ խոսքով ասում են, թե հողի ֆիզիկական գրությունը գութանավարով մենք լավացնում ենք:

6. Դաշտը գոմաղբով պարարտացնելու դեպքում մենք կարողանում ենք գութանավարով հավասար խորությամբ և միատեսակ թաղել գոմաղբը և հավասարապես ապահովել սրնընդանյութերով ամբողջ ցանքսը: Միաժամանակ մենք հնարավորություն ենք ստեղծում, վոր մտցրած գումաղբը համահավասար և արագ փախ—քաչքայվի և իբրև սնունդ ծառայի ցանքսերին:

7. Այս բոլոր միջոցները գործադրելով գութանավարը զայիս և ապահովելու մեր դաշտերի բերքը վոչ թե 25—40 փթով, ինչպես մինչ այժմ և չեղել, այլ 80—100 փթով և ավելի բերքով, վոր մեր հողերից հեշտությամբ հնարավոր և ստանալ:

Ահա թե ինչքան մեծ տարբերություն կա գութանավարի և արորավարի մեջ:



Faint, illegible markings or a stamp at the bottom center of the page.



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039293

60543

A $\frac{I}{4353}$

ԳԻՆԸ 4 ԿՈՄ. ՄԱՍ. (Տ/Վ ծածուկ)



Մ. Կոր-Ներսիսյան

ՍԼՄ ԻԼԻ ՏՈՒԱ?

Գոսիզատ ՏՏՐ Արմենի
Զրիվան—1930